Է. ՏԱՐԻ 2030 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 13 ՍԱՀՄԻ 1383 – Հ. Տ. 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890 – Ն. Տ. 3 ՆՈՅԵՄԲԵՐ 1890 – ՀԻՃՐ. 19 ՐԻՊԻԼ ԷՎՎԷԼ 1308 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ԱՐՏԱՀՐԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

| | | |
|---|---|---|
| Կ. Պոլսոյ | տարի | 160 |
| » | կիսամեայ | 80 |
| » | եռամսեայ | 40 |
| Գաւառաց | » | 200 |
| » » | կիսամեայ | 100 |
| Օտար երկրաց | տարի | 56 |
| » » | կիսամեայ | 28 |

Դուռը գրեալ լրագրաց համար խորհրդ Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան գրեալ նամակ կամ գրութիւն ետ լրագրի

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1890

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԱՐԴԻ ՎԻՃԱԿ

Օրուան կարեւոր դէպքը Պ. Թրիքուփիսի Նախարարութեան պարտութիւնն է։ Պ. Տէլեանիսի կուսակցութեան յիշխանութիւն անցնիլն է։ Արդէն ցոյց տուինք թէ ինչ պատճառներով այս դէպք միջազգային կարեւորութիւն մը կը ստանայ, և դրացի Տէրութեանց համար եւս նշանակութենէ զուրկ չէ։ Թէեւ Պ. Տէլեանիս ընդդիմադիր կուսակցութեան գլուխ եղած ժամանակ շատ համարձակ կը խօսէր, և ծայրայեղ միջոցներ կ'առաջարկէր՝ պախարակելով Պ. Թրիքուփիսի շրջահայեաց ընթացքը, բայց պէտք չէ կարծել թէ Պ. Տէլեանիս ինք յիշխանութիւն անցնելէն ետքը նոյն ծայրայեղ գաղափարաց վրայ մնայ անփոփոխ։ Իշխանութիւնը շափաւորիչ և պահպանողական ազդեցութիւն մ'ունի, յորմէ զերծ չեն կրնար մնալ ամենէն ծայրայեղ կուսակցապետներն անգամ։ Առայժմ, Պ. Տէլեանիս աւելի ներքին բարւոքմանց ու կազմակերպութեանց վրայ կը խօսի քան արտաքին արկածախնդրութեանց վրայ։ Ելմտական, տնտեսական, զինուորական և նաւային ոյժերը վերակազմել նոր վարչութեան անմիջական նպատակակէտն է, և որովհետեւ այս նոր վարչութիւն ստուար մեծամասնութեամբ մը յիշխանութիւն անցած է, բաւական ժամանակ ընդդիմադիր չպիտի դտնէ իւր առջեւ, և անվրդով պիտի իրագործէ իւր դիտումներ։

* * *

Իտալիա մէկ ծայրէն միւսը բուռն յուզման մէջ է։ զի Պ. Քրիսպիի նախարարութիւնը լուծեց արդի երեսփոխանութիւնն, և ժողովրդային վրճռոյն կոչում ըրաւ, որոշելով ի մօտոյ երեսփոխանական ընդհանուր ընտրութեանց կատարումն, որուն համար ամեն կուսակցութիւնք կը պատրաստուին։ Գլխաւոր կուսակցութիւնք են կառավարականք, որք ներքին աշխարհավարութեան մէջ ազատամիտ են, և կղերին դէմ հաստատեալ օրինաց պաշտպան, իսկ արտաքին աշխարհավարութեան մէջ Երրեակ Նիզակակցութեան կուսակից։ Պահպանողական ընդդիմադիրք, որք արտաքին աշխարհավարութեան մասին շատ չեն տարբերիր Պ. Քրիսպիէ, բայց ներքին աշխարհավարութեան մէջ աւելի չափաւոր են, և Արմատականք, որք արտաքին աշխարհավարութեան մէջ Երրեակ Նիզակակցութեան հակառակորդ են, Աւստրիոյ թշնամի են, և Ֆրանսայի բարեկամ։ Ներքին աշխարհավարութեան մէջ եւս Պ. Քրիսպիէ աւելի արմատական։ Ընդհանրապէս կը կարծուի թէ ժողովրդային ստուար մեծամասնութիւն պիտի վաւերացնէ Պ. Քրիսպիի ընթացքը։

* * *

Պալքանեան կամ Դանուբեան երկրք (Պուլկարիա, Սերպիա, Սեւ Լեռն և Ռումանիա,) հանդարտ են։ Շփոթութեան անմիջական երկիւղք առայժմ փարատած են։ Եւրոպա այն կողմէ ո՛ և է փոփոխում չուզեր առայժմ, և այս վիճակ կրնայ տեւել ընդ երկար։

Ֆրանսա կը թաղէ Պուլանժէուութիւնն, և իւր տնտեսական խնդրով կը զբաղի, մաքսային ընդհանուր քաղաքականութիւնը սահմանելով։

Անգլիա զարմացմամբ կը դիտէ Պ. Կլատսթոնի ֆիզիքական և իմացական կորովն, որով մեծամեծ դէպքերու մէջ կը խօսի երկրին աշխարհավարութեան ամեն կէտերուն վրայ, արտասովոր առատութեամբ և պերճախօսութեամբ։

Ուրիշ ծերունի մը, Մոլթքէ, ընդհանուր սքանչանաց առարկայն է ի Գերմանիա։ Ճարտարագործ Անգլիոյ համար՝ Կլատսթոն, զինուորական Գերմանիոյ համար՝ Մոլթքէ, քաջայարմար տիպարներ են։

Ռուսիա, ամեն ժամանակէ աւելի ձեռնթափ արտաքին խնդիրներէ, ամեն ժամանակէ աւելի ամփոփ մնօք իւր ներքին զօրութեանց վերակազմութեամբ և զարգացմամբ կը պարապի։

Պելժիոյ մէջ ազատական կամ հակակղերական կուսակցութիւնն ընտրական մանակի յաջողութիւններով կը հրճուի։

Հիւսիսային, Արեւելեան և Հարաւային Ափրիկէ կը շարունակէ զբաղեցնել զինդլիա, զիտալիա, զՖրանսա, զԳերմանիա և զՓորթուկալ։

Եւրոպեան ծանրակշիռ քաղաքական խնդրոց բացակայութեան նշանակ է որ այնքան շատ կը խօսուի ափրիկեան խնդրոց վրայ։

Գործաւորական խնդիրն Ափրիկէի դէմ զօրաւոր մրցումի մը կը մղէ, առ ինքն դրաւելով ամեն մտադրութիւններ։ Գործաւորաց և գործատերաց ներկայ կազմակերպութիւնք և ձրդումներ օրուան ծանրակշիռ խնդիրն են։

Ցայսմ մասին ինքն իւր մէջ բաժանեալ, Եւրոպա միահամուռ սրտմրտութեամբ կը դիտէ Ամերիկայի կողմէ հռչակեալ մաքսային պատերազմը բովանդակ Հին Աշխարհին դէմ։

### ՏԱԳՆԱՊՆ Ի ՕՈՒՆԱՍՏԱՆ

Ընտրութեանց արդիւնքն եղաւ 110 երեսփոխանք Պ. Տէլեանիսի կուսակիցք և 40 Պ. Թրիքուփիսի կուսակիցք։ Պ. Տէլեանիսի կուսակցութեան մէջ կը համրուին իբր 10 կուսակիցք Պ. Ռալլիի, «հելլենական չէզոք կուսակցութիւն»։

Այս արդիւնք անակնկալ էր բոլորովին, թէեւ ժամանակէ մ'ի վեր Պ. Թրիքուփիսի ազդեցութիւնը տկարանալու վրայ էր։

Երբ ընտրութեանց արդիւնքն յայտնի եղաւ, նախարարք անմիջապէս ի խորհրդակցութիւն գումարեցան, եւ որոշեցին հրաժարիլ։ Թագաւորն եւս ամարանոցէն եկաւ յԱթէնս, ուր Պ. Թրիքուփիս մատոյց նախարարութեան հրաժարականը։ Թագաւորն ընդունեց, ինդրելով միանգամայն որ գործերը վարեն ցընտրութիւն իրենց յաջորդաց։ Պ. Տէլեանիս հրաւիրեցաւ յարքայական պալատ, և չորս օր պայմանաժամ խնդրեց նորակազմ նախարարութեան ցուցակը թագաւորին մատուցանելու։

Հակառակորդք անգամ կը խոստովանին թէ Պ. Տէլեանի, հակառակ իրեն վերագրուած սխալներու, ազդեցիկ մարդ մ'է։ Աւելի քան քառորդդար մը յառաջ, 1862ին, կարեւոր դեր կատարած էր Ազգային ժողովոյ մէջ, և այն ժամանակէն իւր բանախօսութիւնք պերճախօսութեամբ, հայրենասէր զգացմամբ եւ հեռատեսութեամբ նշանաւոր էին։ Այն թուականին ինքն էր որ՝ իբրեւ արտաքին գործոց նախարար՝ ի գլուխ հանեց այն բանակցութիւններ որք Եւրկիոս թագաւորին ընդարձակ յանդեցան։

Այնու ամենայնիւ, Պ. Տէլեանիսի յաջողութեան լուրը բուռն ցնցում պատճառեց Ամէնքի Սակարանին մէջ, ուր հելլենական արժեթղթոց և գանազան ընկերութեանց բաժնեթղթոց վրայ յանկարծակի անկում պատահեցաւ։ Ոսկի 20 ֆրանքնոցին արժէքը 24·50 տրահմիէն 24·90ի ելաւ։ Բայց այս անկում վաղանցիկ կը համարուի։ զի Պ. Տէլեանիս, ճառախօսելով առաջի իւր ընտրողաց ի Թրիփոլիցա, յայտարարած է թէ պատերազմէ պիտի զգուշանայ, և ներքին բարենորոգմամբ պիտի զբաղի։

### ՄՈԼԹՔԷ

Հինգ տարի յառաջ երբ Պիզմարք իշխանի ծննդեան 70րդ տարեդարձը կը կատարուէր, բովանդակ Գերմանիա, ազգային երախտագիտութեան մեծ ցոյց մ'ընելով ի պատիւ իրեն, շատ մը նուէրներ մատոյց, յորս գրլխաւորն էր ազգային հանդանակութեամբ հաւաքեալ երկու միլիոն 750 հազար մարքի գումարը։

Մոլթքէ կոմսին 90րդ տարեդարձին առթիւ եւս, այսպիսի հանդանակութեան մը ձեռնարկեցաւ, և ցարդ 100,000 ոսկւոյ չափ ստորագրեցաւ, որով պիտի գնուի և իբրեւ ազգային ստացուածք մշտնջենապէս պիտի ապահովուի Փարխիմի Մեքլեմպուրկեան քաղքին մէջ այն համեստ տուն ուր ծնած է Մոլթքէ։

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴԱՆԶԵՐ

Երբ Ֆրանսական բանակին հրաման տրուի պատերազմի պատրաստուելու, Ֆրանսայի Դրամատունը կարող է պատերազմական Նախարարին տրամադրութեան ներքեւ դնել 1,206 միլիոն Ֆրանքի ոսկի մետաղ և 1,244 միլիոն Ֆրանքի արծաթ մետաղ։ Պ. Ռուվիէ Ռոշիլտի հետ համաձայներ է պէտք եղած քանակութեամբ մետաղադրամին անմիջական յանձնման համար Ֆրանսայի պատերազմական նախարարին, երբ զօրահանութեան հրամանը տրուի։

Գերմանիա եւս 150 միլիոն մարքի պատերազմական գանձ մ'ունի՝ Սփանտաուի աշտարակի մը մէջ անշարժ պահուած, և 800 միլիոն Ֆրանքի մետաղադրամ՝ շահու դրուած, անմիջապէս յանձնելի։

### ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Գ.

### ՈՐԲԱՆՈՑՔ

Բարեգործական շատ մը հաստատութեանց պէս որբանոցք եւս հիմնուեցան Քրիստոնէութեան բարերար ազդեցութեան շնորհիւ։ Առաջին ազգքատանոցն և որբանոցն հիմնեց Փաբիօլա անուն հռովմայեցի տիկին մը չորրորդ դարու մէջ։ այժմ բոլոր քրիստոնեայ ազգեր ունին իրենց որբանոցներն։ Հարուստ և քաղաքակրթեալ ազգեր ո՛չ միայն զատեր են որբանոցներն հիւանդանոցներէ, այլ և յիմարաց, ծերոց և ազքատաց համար յատկացուցեր են ուրոյն հաստատութիւններ հաստատ եկամուտներով։ բայց փոքր և ազքատ ազգեր անչուշտ չեն կարող հիմնել այլ և այլ տեղ հիւանդանոց, յիմարանոց, ծերանոց և որբանոց։ վասնորոյ զայս ամենայն կը պարփակեն ի մի վայր։ Սակայն և այնպէս յիշեալ բարեգործական հաստատութեանց գոհացուցիչ վիճակի մէջ գտնուին ո՛չ միւ և նոյն կամ տարբեր տեղ լինելէ, ո՛չ ալ այս ինչ կամ այն ինչ տեղ չենուելէ, այլ բարւոք մատակարարութենէ, լաւ հոկողութենէ, ի մի բան իւր բուն նպատակին համապատասխան դրից մէջ գտնուելէ կախումն ունի։ այս ալ ուրիշ կերպիւ չկրնար ըլլալ, բայց եթէ սոյն հաստատութեանց վարչութիւնն յանձնելով բարեսէր, իմաստուն, ձեռնհաս, վեհանձն և անայտառ անձերէ կազմեալ մարմնոյ մը։ Թողլով այլուստ ժամանակի և տեղւոյ մանրամասն խօսիլ ծերանոցի և յիմարանոցի վրայ, առայժմ խօսինք միայն որբանոցաց կազմակերպութեան վրայ։

* * *

Որբանոցի բարեկարգութիւնն ապահովելու համար նախ և յառաջ պատսպարեալ որբոց թիւն սահման մ'ունենալու է ըստ ներելոյ չէնքին և եկամտից։ արդարեւ այս մասին սահման որոշել եթէ ոչ անհնարին դէթ խիստ դժուար է։ զի կրնայ պատահիլ թէ որոշեալ թիւն լրանալէ յետոյ բերուին մի քանի որբեր եւս խիստ արգահատելի վիճակի մէջ, յայնժամ ի՞նչ ընելու է հոգաբարձութիւն կամ վարչութիւնը։ ահա կարեւոր խնդիր մը արժանի ուսումնասիրութեան։

Ցայտնի է թէ ամէն ազգ ունի որոշ թիւ մը։ եթէ ազգերը բաղկացնող անհատից թիւն յայտնի ու որոշ է, խելքի դէմ է ընդունիլ թէ որբերու թիւն անայտ և անորոշ լինի։ անտարակոյս մեծ ազդաց մէջ որբերն աւելի բազմաթիւ են ինչպէս նաեւ մեծ և բազմամարդ գաւառաց մէջ։ նոյնպէս փոքր ազգաց մէջ որբերն աւելի սակաւաթիւ են ինչպէս որ փոքր գաւառաց մէջ եւս, ուրեմն կեդրոնական մի որբանոցի մէջ հարկ է ընդունիլ որբերն ըստ բազմամարդութեան գաւառաց, ինչպէս իւրաքանչիւր գաւառէ որոշեալ թիւով աշակերտք կ'ընդունուին Դէորգեան ճեմարանի մէջ, այնպէս պէտք է լինել կեդրոնական վարժարանի մէջ եւս։

Ընկալեալ որբերն պարտին լինել անարատ և քաջառողջ, զերծ մարմնական ամեն թերութիւններէ, մարթային և այլ փոխանցիկ հիւանդութիւններէ, ուշիմ եւ պարկեշտ, բստ որում մոլութիւնք աւելի փոխանցիկ են մանաւանդ դպրոցներու և որբանոցներու մէջ։ յաճախ տեսնուած է որ մի քանի անառակ տղայք իրենց ընկերաց մեծ մասն գլխէ հաներ են։ և արդ մարմնական փոխանցիկ հիւանդութիւններէ շատ աւելի ուշադրութիւն դարձնելու է բարոյական փոխանցիկ հիւանդութենց։ զի առաջինք յարմար դեղերով կրնան բժշկուիլ, մինչդեռ վերջինք դժբաղդաբար անբուժելի են։ Ուրեմն ամեն որբ չկրնար որբանոց ընդունուիլ։ ահա այսու պատճառաւ փափաքելի է որ հոգաբարձութեան անդամք լինին ո՛չ միայն բարեսէր և գորովագութ այլ նաեւ խիստ և անայտառ, տեղի չտալու համար ո՛ և է արտաքին ազդեցութեանց ու ճնշմանց։ Հարկ կա՞ ըսելու թէ որբ չեղող տղայք բնաւ ընդունուելու չեն, ո՛րչափ ազդեցիկ անձերէ ալ յանձնարարուին և ինչ անուամբ ալ յղուին։

Սոյն սկզբան հետեւելով եւեթ կարելի է որբոց թիւն սահմանաւոր և անոնց ընտրութիւնն օրինաւոր լինել։ եթէ ուսումնասիրա որբոց մէջէն ամենէն ուշիմներն երկրորդական վարժարաններ դրկուին, ազգին ընտիր եւ օգտակար անդամոց թիւն կ'աւելնայ։ Կա՛ր ժամանակ որ հայ մեծատունք իրենց զաւակաց հետ ուշիմ բայց ազքատ աշակերտներ ալ կը դրկէին բարձրագոյն վարժարաններ։ եղած են անոնց մէջ այնպիսիք որ տղայի մէջ ո՛չ միայն իրենց ընտանեաց այլ և՝ որ աւելին է՝ իրենց պաշտպանաց իսկ օգտակար եղած են երբ դժբաղդութեամբ մը անոնց դործն աւրուած է։ վերջապէս, պէտք է գիտնալ թէ աշխարհիս վրայ ամեն բան անհաստատ և անկայուն է, վասնորոյ պարտիմք բարեգործութեան տաճիմն ձեռքէ չթողուլ։

* * *

Որբանոցի չէնքն անչուշտ առողջարանական օրինաց համաձայն լինելու է։ յեմ ուզեր այս մասին մանրամասնութեանց մտնել, Էնդոնոյ վերնագրով կրկին յօդուածներուս մէջ պէտք եղածն արդէն գրած լինելով։ բայց չեմ կրնար առանց յիշատակութեան անցնիլ սնունդն, որ աւագ կարեւորութիւն ունի, մանաւանդ կենաց առաջին և վերջին շրջաններուն մէջ։ վասն զի ինչպէս ծերք չեն կրնար իրենց էութիւնը պահպանել առանց բարեկեցիկ վիճակ մ'ունենալու, նոյնպէս ալ տղայք չեն կրնար աճիլ ու զարգանալ առանց առողջարար սնունդ ստանալու։ Առողջարար սնունդ բաղելով համադամ խորտիկներն ու մեծամեծ սեղաններն հասկնալու չէ, այլ պարզ և սննդարար կերակուրներ։ զի չափաղանց կերակուրք և դրդռիչ բաղելիք անբաւական սնունդ չափ եւ դուցէ ալ աւելի վնասակար են առողջութեան, ինչպէս շատ անգամ կը տեսնուի ստամոքսի ընդլայնում, դրժուարամարսութիւն, յօդացաւ (Խիստ), շաքարախտ և այլ յարատեւ ու անբուժելի հիւանդութիւնք այս կերպիւ սնունդ առնող անձանց վրայ։ ուստի, եթէ այսպիսիք պարզ և չափաւոր ուտելիք դործածելով աւելորդմանն յատկացնեն որբանոցի, յայնժամ թէ՛ իրենց առողջութիւնը չի խանգարուիր և թէ որբոց սնունդն անբաւական չի լինիր։ Աւելին կայ։ չափազանց կերակուրները մարսելու համար այլ եւս դեղօրէից ալ պէտք չեն ունենար։

Որբոց հագուստը սննդեան պէս պարզ և անպաճոյճ լինելու է։ բաւ է որ ամառը տաքէն և ձմեռը ցուրտէն զերծնք պատսպարէ։ առ ի՞նչ կը ծառայեն աւանդեալ շատ մը ուլթիւններ երբ նոքա չեն կարող պատրաստել նոյն իսկ իրենց կոչիկներն և հագուստներն։ ո՛չ երբեք անբաւական է եթէ խնամով աւանդուին նոցա մայրենի լեզու, հաշիւ, աշխարհագրութիւն, պատմութիւն և եկեղեցական երգեցողութիւն եւ այլ տարբական ուսմունք։ յաւել ի սոսա տեղական անհրաժեշտ արհեստներն ալ, յայնժամ ամենայն ինչ կատարեալ է։ ի բաց առեալ խիստ ուշիմ, գործունեայ եւ պարկեշտ որբերն, որք պաշտպաններու միջոցաւ կրնան բարձրագոյն վարժարաններ դրուիլ։ աւելի ազէկ է որ քիչ բան սովրին եւ հիմնովին սովրին քան թէ շատ բաներու հետամուտ լինին և ամենուն մէջ թերանան։ ինչպէս են դժբախտաբար մերդպրոցաց ուսումնասիրաներու շատերը։ Ազգը պէտք չունի իմաստակներու և թեթեւսոլիներու որք ամէն տեղ կը վիստան, այլ լուրջ, խոհեմ և ուսեալ մի նոր սերնդեան։ Ուստի օրհնեալ լինին նոքա որք որբանոցն արհեստանոցի վերածելու գաղափարն յղացած և առ այս հաստատ եկամուտներ հայթայթելու յաջողած են։ շինուելիք որբանոցն կամ արհեստանոցն հիւանդանոցէն անջատ լինի կամ ոչ, զայս եւեթ պէտք է խորին ուշադրութեան առարկայ ընել թէ միոյն գոյութիւնն ու արդիւնաւորութիւնն միւսոյն չվնասէ, ինչպէս եղած է ժամանակաւ ճեմարանն հիւանդանոց փոխադրելով։ նախ և յառաջ հիւանդանոցն գոհացուցիչ և բարեկարգ վիճակի մէջ լինելու է։ զի խղճի և օրինաց դէմ է յանուն հիւանդաց, յիմարաց և որբոց հանդանակեալ դումարն ուրիշ նպատակի դործածել։ Դիւրին բան չէ դարուս ոգւոյն և քաղաքակրթութեան պահանջմանց համաձայն հիւանդանոց, յիմարանոց և որբանոց ունենալ։ առ այս պէտք է յարմար չէնք, անձնուէր վարչութիւն և պարտաճանաչ պաշտօնէութիւն։ Քաղցր է մեզ յուսալ թէ Ազգ։ Հիւանդանոցի Պատ։ Հոգաբար-

---

—)( 65 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

## ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

# ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԱՆԿՈՒՄԸ

—Պիտի ջանանք ազատիլ այդ կացութենէն։

Երիտասարդը գլուխն օրօրեց։

—Օձօռը կորսուած է ինձի համար, ըսաւ։

Դերակոմսը չի պատասխանեց։ Մտախորհ կը մնար։

—Հակառակ ձեր փորձառութեան, յարեց Ատրիէն, հակառակ ամենէն մեծ դժուարութեանց իսկ յաղթելու մասին ձեր ունեցած վարժութեան,— վասն զի յաճախ լսած եմ որ ըսած էք թէ արգելք ըսուած բանը գոյութիւն չունի ձեզի համար,—խորհուրդ մը չէք կրնար տալ ինծի, չէք կրնար ըսել թէ ի՞նչ ընելու եմ։

Դերակոմսը գլուխը վեր առաւ մեղմիւ։ Վայրկենական փայլակ մը չողաց նայուածքին մէջ։

—Սիրելիդ իմ Ատրիէն, ըսաւ ծանր ձայնով մը, կը սխալիք։ ես ըսեմ ձեզ թէ ի՞նչ ընելու էք։ նմանապէս կրնամ օգնել ձեզ՝ իմ մտերմական խորհուրդներովս։ Բայց խնդիրն հոն է թէ, պիտի հետեւի՞ք անոնց։

—Ըսէ՛ք, բարեկամս, ըսէ՛ք։

—Եթէ ես ձեր տեղն ըլլայի, սիրելիս, ըսաւ դերակոմսը, չեչտակի երիտասարդին աչքերուն մէջ նայելով, իրր երազ մը կամ ցնորք մը կը նկատէի Քորսըլիէռի մէջ ինձ պատահածը, յիշողութեանս մէջէն կը ջնջէի զայն ու այլ եւս չէի մտածեր գեղանի Օձօռին վրայ։

—Այդ անկարելի՞ է, գոչեց մարգիզն հրաբորբոք չեչտով մը։

—Հիմակո՞ւց կը հակառակիք։ սակայն ասկից աւելի իմաստուն խորհուրդ մը չէի կրնար տալ ձեզ։

—Ես ալ այնպէս կը կարծեմ, ու Սանզաք, և շնորհակալ եմ ձեզ։ Բայց ի՞նչ որ խելքս ցոյց կուտայ ինձ ընել, սիրտս պիտի արգելու գործադրել զայն։ Օձօռը կը սիրեմ։ իր վրայ ունեցած սէրս սովորական սէր մը չէ։ բուռն, կատաղի տարփանք մըն է որ կը խառնվի զիս, որ խելքս գլխէս կ'առնու, տակն ու վրայ կ'ընէ զիս։ Իրեն մօտենալու, զինքը նորէն տեսնելու համար, պատրաստ եմ դիմագրաւելու ամեն բանի՝ իր հօրը բարկութեան և մահուան վտանգներու։ Ըսի ձեզ արդէն, ու Սանզաք, այդ աղջիկն իմ բոլոր անձիս տիրեց։ սիրտս, հոգիս, արիւնս, կեանքս, ամենքն ալ անոր կը պատկանին։ եւ դուք կ'ըսէք թէ մոռնա՞մ զայն։ Երբէ՛ք, բնաւ երբէք։

—Կը տեսնեմ արդարեւ թէ պարապ ժամանակ կորուսած պիտի ըլլամ ձեզ խօսելով այն լեզուաւ զոր Մէնդոր կը գործածէր Տելամաքի առջեւ։ Քանի որ իմաստուն չենք կրնար ըլլալ, յիմար ըլլանք։ Սակայն, սիրելիդ իմ Ատրիէն, խորհելու եւ կացութիւնը լրջօրէն քննելու յոգնութիւնը կրենք, առանց ձեր սրտին խանդավառութենէն մոլորուելու։ Դուք նախապաշարում չունիք, լաւ գիտեմ։ սակայն մարդս շատ անգամ կ'ստիպուի նախապաշարմանց մատնուիլ։ Այս կէտը անցնինք։ Դուք մեծանձն էք, վեհանձ, փառասէր, ձեր սիրոյ բորբոքման մէջ, առաջին սէր մը՝ ձեր խանդաղատանքով բոցավառուած՝ արդէն անկարող չարաչար գործածելու ծաղկատի աղջկան մը անմեղութիւնը, որ ձեզ անձնատուր կ'ըլլար վստահելիս, վտանգէն անտեղեակ, ձեզ այնպէս թուեցաւ որ զայն մինչեւ ձեզ բարձրացնելը, զայն ձեր կինը ընելը, աշխարհիս ամենէն պարզ բանն էր։ Իմ ուրեմն, սիրելի մարգիզ, բոլորովին խելքերնիդ կորսնցուցած էիք, այո՛, խենդ էիք։ Հիմակ ամէն բան կ'ապացուցանէ թէ մեծ յիմարութեան մը վրայ կը մտածէիք։ եւ ձեզի համար մեծ բարեբաղդութիւն մ'է որ հայրը տմարդաբար միջամտեց։ Ա՜հ, գլխունուդ դոյլ մը պաղ ջուր կերաք, որ անշուշտ ազէկ պիտի գայ ձեզի։ Ժպիտ մը սաւառնեցաւ երիտասարդին շրթանց վրայ։

—Սիրելիդ իմ Ատրիէն, շարունակեց դերակոմսը, վայրկեան մը մոռցաք թէ ի՞նչ պարտական էիք ձեր կրած անուան, ձեր ընտանիքին, ձեր յարաբերութեանց, ձեր ընկերութեան եւ ձեր անձին իսկ։ Երբ մարդ Վէրվէնի մարգիզ կը կոչուի, այսպէս իր անունը չտար ճամբուն վրայ դիպուածաւ հանդիպած մանկամարդ աղջկան մը, որչափ ալ պաշտելի ըլլայ ան։ Նորէն պիտի պառաք երեսս ի վեր թէ կը սիրէ՞ք զինքը։ խենդ չեմ որ ձեր սիրոյն արգելք ըլլամ։ Սիրեցէ՞ք, պաշտեցէ՞ք զինքը։ Բայց այնչափ միամիտ մի՛ ըլլաք որ հաւատաք թէ մարդս հարկադրուած է ամուսնանալու իր սիրած աղջկան հետ։

Ատրիէն ընդոստ շարժում մը ունեցաւ։

—Ձեր այլայլութենէն դատելով, ըսաւ դերակոմսը, կարծեմ ոչ ոք այսպէս խօսած է ձեր առջեւ։ սակայն շատ անգամ դուք ալ այսպիսի լեզու մը գործածած էք։ Շիտա՞կ է։

—Այո՛, շիտակ է։

—Եւ այն ատեն իրաւունք ունէիք ինչպէս որ ես իրաւունք ունիմ այս վայրկենիս։ Դուք կուրցած էք սիրելիս։ ի՞նչ կ'ուզեմ ընել ես։ Աչուընիդ բանալ։ կ'ուզեմ ձեզ ցոյց տալ այն խորին անդունդն որուն եզրը կը քալէք։ Մարդ կրնայ շատ յիմարութիւններ, շատ խենդութիւններ ընել։ պէտք է որ երիտասարդութիւն անցնի։ Բայց հազար պարագայներու մէջ, ամուսնութիւնը տխմար, ծաղրելի բան մըն է, ուսկից պէտք է զգուշանալ որպէս ժանտախտէ։ Եւ դուք ամուսնանալու վրա՞յ կը խորհէիք։ Եթէ մեր բարեկամները իմանային, ի՞նչչափ պիտի խնդային։ Օ՜հ, սիրելիս, քսանեւվեց տարեկան էք դեռ։ դեռ շատ ժամանակ ունիք չուանը վիզերնիդ անցուելու։

«Դառնանք օրիորդ Օձօռի։ Ի՞նչ է այդ աղջիկը։ Ձեզ գիտեր։ Ինք բան մը չգիտեր, մինչեւ իսկ հօրը անունը։ լսած տեսնուա՞ծ բան է այս։ Հրեշտակներու անմեղութիւնն եւ մաքրութիւնն ունի եղեր, սիրահարի խօսքեր։ Իր բարեմասնութիւններէն ոչ մին կ'ուզեմ վար դնել։ ընդհակառակն կը խոստովանիմ, ձեր ըրած նկարագրութենէն, թէ երկնային գեղեցկութիւն մը ունի, թէ իր գեղեցկութիւնը խելացնի կը մատնոյ։ Սակայն, սիրելիս Ատրիէն, պատկերին մէջ արատ մը կը տեսնեմ, որ իմ աքանչացումս կը զրկէ։ Ձեր պատմութեան մէջ երկու երեք անգամ, բառ մը զոր չհամարձակեցաք արտասանել, ձեր չրթանց ծայրն եկաւ։ ապուշ բառն է այդ։ Ատոր տեղ դրիք միամիտ բառն, որ միեւնոյն նշանակութիւնն ունի։ Մեծ ուշադրութեամբ մտիկ ըրի ձեզ, զարմացումէ զարմացում գլորելով։ Այս աղջկան վրայ զուրցած խօսքերնիդ զարմանալի են, ինչպէս և իր խօսքերը, վարմունքն եւ ձեզի նկատմամբ ունեցած ընթացքը։ Մանկամարդ աղջկան մը միամտութիւնն երբեք այդ ասոնցմանին հասած չէ։ Իրօք ապո՞ւշ է։ Այնպէս ըսենք թէ չէ։ Բայց յայտնի է թէ չը փոթ իմացականութիւն ունի և միտքը կը տատանի խաւարի մէջ։ Բան մը սովրած չէ, բան մը չգիտեր։ Բարիքը, չարիքը այնպիսի բաներ են զորս չհասկնար եւ կը հարցնեմ ինքնին թէ ի՞նչ օրէն արդարին եւ անիրաւին զգացումն ունի՞։ Ամէն պարագայի մէջ, չեմ համարձակիր հաստատել թէ խորհելու կարողութիւն ունի։ Իր մտքին մէջ ամէն բան տարտամ է։ Ինչ աղջիկը կ'ապրի ինքզինքն թողուած, լոկ իր բնազդումներուն անձնատուր։ Տեսակ մը վայրենի է։

«Եւ այդ միամիտ աղջիկը մարգիզո՞ւհի ընել կ'ուզէք։ Շիտակը յանդուգն ձեռնարկ։ Բայց այդ թիթեռնիկներու սիրահար աղջիկը զձեզ հմայե՞ց, ի՞նչ ըրաւ։ Զարմանալի՛ բան։ Եթէ ես ձեր բարեկամը եղած չըլլայի, եթէ չի գթայի ձեր վրայ, խնդալէս պիտի ճաթէի։»

Ատրիէն կարմրեցաւ։ Ներքնապէս կ'ըսէր։

—Սանզաքը իրաւունք ունի։

Եւ չփոթած՝ գլուխը կախեց։

—Ձիւղ գլխուն զարկի, մտածեց դերակոմսը։

Եւ դիւային ժպիտ մը անցաւ շրթանցը վրայէն։

Ցետոյ, ինքնիրեն խօսողի մը պէս, դանդաղաբար սա բառերն արտասանեց։

—Եթէ հոմանուշի մը ընել ուզէիք, չէ՞ չէի ըսեր, բայց մարգիզուհի, երբէ՞ք։

Ատրիէն սարսուռ մը ունեցաւ որ դերակոմսին սուր նայուածքէն չվրիպեցաւ։

Նորէն ժպտեցաւ, աչքերը չողացին և ինքնիրենն ըսաւ։

—Կամաց կամաց կարգի պիտի գայ։ Իմ ձեռքս է։

(Շարունակելի)

ձութիւնն, որ ինչպէս յաջողեցաւ հիւանդանոցի և յիմարանոցի համար հոյակապ նոր շէնքեր կառուցանել, նոյնպէս պիտի յաջողի ըստ այնմ կազմակերպել ընտիր և պարտաճանաչ պաշտօնէութիւն մը, մանաւանդ դընել յիմարանոցն գոհացուցիչ վիճակի մէջ, սահմանելով մի յիմարաբոյժ բժիշկ և յիմարապահներ. զի ցարդ յիմարք իբրեւ պատսպարեալ եւեթ կը նկատուին և ըստ այնմ կը խնամուին. ապաքէն անհնար էր յիմարանոցը գոհացուցիչ վիճակի վերածել առջի հին շէնքին մէջ. այս պատճառաւ ազգայնոց բարեկեցիկ դասը կ'ըստիպուէր դիմել Շիշլիի յիմարանոցն և այլուր։ Նորակառոյց յիմարանոցի գոհացուցիչ վիճակը մեծապէս կրնայ նըպաստել հիւանդանոցի ելմտական վիճակն ալ բարւոքելու։ Այս ամէն բաներուր և չափաւոր ակնկալութեանց կատարումն տեսնելու համար մեծ պէտք կայ ո՛չ միայն Պատ. Հոգաբարձութեան, այլ և համայն ազգայնոց -ջանչ-ՐԻՆ և դ-ՐԻՆ։ Ղ. Պ.

## ՌՈՒՍԻԱ ԵՒ ՉԵՌՆԱԿՈՐԱ

Սեւ Լերան Նիքոլա իշխանին անդրանիկ դստեր՝ Զորքա իշխանուհւոյն Քարաեորկեւիչ իշխանին հետ ամուսնութեան առթիւ, 1883 ին, Զարը մէկ միլիոն ռուպլի օժիտ տուաւ նմա։ Որպէս զի այս գումարը խաղի մէջ չկորուսանէ իւր փեսայն, Նիքոլա իշխան իւր դանձին մէջ պահեց զայն, և միայն տոկոսը տուաւ փեսին։ Զորքա իշխանուհին մեռած լինելով Քարաեորկեւիչ մէկ միլիոն ռուպլի դրամագլուխը կը պահանջէ։ Աները չի տար, զգուշանալով զի մի՛ գուցէ քաղաքական նպատակներու գործածէ Սերպիոյ մէջ։ Աստի՝ գժտութիւն մէջերնին։ Նիքոլա իշխանին երրորդ փեսայն՝ Էլեոյթիէնպերկի իշխան՝ միջնորդեր է ի Զէյթինէ, բայց չէ յաջողեր։

## ԻՏԱԼԱՑԻՔ ՕԱՄԵՐԻԿԱ

Ի Նիւ Օրլէանս բուռն գրգռութիւն կը շարունակէ տակաւին իտալեան գաղթականութեան դէմ, մանաւանդ Մաֆիա կոչուած իտալացի աւազակաց վրէժխնդիր ընկերութեան դէմ, որ նոյն քաղաքին մէջ նոր և ահռելի ոճիր մը գործեց։ Այս եղեռնագործութեանց քսանեցի շաբթն համայն Միացեալ Նահանգաց այլ մանաւանդ Նիւ Օրլէանսի մէջ հանրային կարծիքը սաստիկ դրգռած է իտալացի շարագործներուն դէմ, և ընդհանրապէս Իտալիային եկող ամէն ստորին դասու անհատից դէմ։ Իտալացիք հետզհետէ կը մեկնին Նիւ Օրլէանսէ։

(Թ-ՐԷ)

## ՁՕՐ. ՕՊՐՈՒԶԵՎ Ի ՓԱՐԻԶ

Գերման լրագիրք շատ ուշադրաւ կը համարին Ռուսիոյ ընդհանուր սպայակոյտին նախագահ Օպրուչէվ զօրավարին Փարիզ երթալն, ուր, ըստ հրատարակութեան ռուս լրագրաց, պաշտօն ունի ֆրանսական բանակին արդի վիճակին վրայ տեղեկագիր մը պատրաստելով մատուցանել Զարին։ Բայց Գերմանք բնականապէս աւելի թաքուն շարժառիթներ կը վերագրեն այս ինքնին ուշադրաւ ուղեւորութեան։

## ԹՈՒՔԱՅԻ ԴԱՐՄԱՆԸ

Պերլինէ Նէյ-Ֆրայ Զայթունգ կը ծանուցանէ թէ Թոքախտի դարմանը գտնելու համար Տքթ. Քոխի ժամանակէ մի վեր ըրած գտնութիւններն ու փորձերը կատարեալ յաջողութեամբ պսակուած են։ Անուանի գիտնականը գտած է արուեստաւոր պատրաստեալ տեսակ մը պատուաստ։ Բայց և այնպէս, Տքթ. Քոխ առաջիկայ ձմրան եղանակին մէջ պիտի դադրեցնէ իւր դասախօսութիւններ Համալսարանին մէջ, և այս նոր գիւտին վերաբերեալ փորձերով եւեթ պիտի պարապի։

Ուրիշ գերման լրագրեր այս օրերս կ'ըսէին թէ Տքթ. Քոխի գիւտն այնքան կատարեալ վիճակ մը չէ առած դեռ, կամ գէթ ինք իրրեւ կատարեալ չի ցուցներ տակաւին։

## ՄԱՍԻՍ

### ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՑ

ՄԱՍԻՍի հոկտեմբեր 15 թիւն, որ շաբթի օր հրապարակ ելաւ, կը բովանդակէ.

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ. Ազգային Հիւանդանոց.

ՍԻՊԻԼ. Աչուն. Բերթուած.

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. Բարժամ. (Կոմկաեան յիշատակ)

ՀՐԱՆԴ. Մէրուէին.

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ. Դիտողութիւնք և դատողութիւնք.

Մ-Խ- ձեռքէ կը ծախուի հատը 40 փարայի։

## ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ ԲԵՐԱՑԻ

Բերայի ազգային Արուեստանոցի Տեսչութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ազնիւ յաճախորդաց որ յառաջիկայ Նոյեմբեր 1էն սկսեալ Նորոյթի և շրջազգեստի (Modes et Confection) տնօրինութիւնը պիտի վարէ Տիկին Ֆրիւժիէ, իւր հետ ունենալով սոյն արհեստի մէջ վարժ օժանդակներ։

Տիկին Ֆրիւժիէ որ քանի տարիէ ի վեր հաստատուած կը գտնուի Բերայի մէջ, շատերուն արդէն ծանօթ է իւր ճարտարութեամբ, իբր Փարիզցի առաջնակարգ դերձակուհիներէ մին։

Հետեւաբար ազնիւ յաճախորդք կրնան կատարելապէս ապահով լինել որ այս ճիւղի վերաբերեալ իրենց պատուէրներն եւս պիտի գործադրուին յետ այսորիկ՝ ճշգութեամբ և աւելի կատարելագործեալ պայմաններով։ 3—4

## ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Լ. Հէրբէրտ կը ծանուցանէ թէ ուրբաթ աւուր Ազգային Ժողովն յետաձգուեր է ցնոր տնօրինութիւն։

Օրթագիւղի հայ հասարակութիւնն արժանավայել յարգանք մը ընծայեց երէկ իր հանգուցեալ Աւագերէցի յիշատակին, խմբովին հաւաքուելով նորագագաղին շուրջն, և օծման ու յուղարկաւորութեան արարողութեանց ներկայ գտնուելէ յետոյ, անոր հետեւելով մինչեւ ի գերեզման։ Բաց ի Օրթագիւղի ազգայնոց ստուար բազմութենէն, յուղարկաւորաց մէջ կը նշմարուէին ուրիշ թաղերէ ալ պատուաւոր ազգայինք ծանօթք՝ և սիրելիք հոգելոյս Տ. Իգնատիոս Աւագ քահանայի Մանավեան, ինչպէս նաեւ օտարազգիք։

Առաւօտուն, Արժ. Տ. Յակոբ Աշոտ Մ. վրդպ. հանդիսաւոր պատարագ մատոյց գիւղին Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ։ Օծման արարողութիւնը կատարեց գիւղին քարոզիչ Դեր. Վահրամ եպիսկ. Մանկունի ի ներկայութեան Դեր. Մատթէոս եպիսկ. Իզմիրլեանի, վարդապետաց ու քահանայից։ Օծման արարողութենէն յետոյ Դեր. Մատթէոս եպիսկ. Իզմիրլեան քարոզ խօսելով բացատրեց քահանային նուիրական պաշտօնն և եզրակացուց թէ հանգուցեալ Տ. Իգնատիոս Հայրն երեսուն և հինգ տարիներէ ի վեր ամենայն արժանաւորութեամբ վարած էր այդ պաշտօնն իբրեւ առաքինազարդ եկեղեցական սիրելի և պատկառելի հանդիսանալով հաւայն գիւղացւոց։ Պատարագէն և օծման արարողութենէն յետոյ յուղարկաւորաց թափորը կազմուեցաւ և հանգուցելոյն մարմինը մեծ հանդիսիւ գիւղին գերեզմանատունը փոխադրուելով ամփոփուեցաւ անդ։

## Ա.Զ.Գ

Ներկայիս կը ծանուցանեմ արգոյ հասարակութեան և Հայրենիքի Պատուարժան բաժանորդաց որ, գինը մեւնոյն պահելով՝ դիրքի ծաւալման եւ այլ եւ այլ ներքին կազմակերպութեան համար, պարտաւորած եմք մինչեւ շաբթի չի հրատարակել Հայրենիք օրաթերթն։

Հրատարակիչ Հայրենիք օրաթերթի
ՄԻՔԱՅԷԼ Կ. ՍԱՐԸԵԱՆ

1890 հոկտ. 22
Կ. Պոլիս

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ՊԱՇՏՕՆԱԳՐԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան մանաւանդ գիւանին առաջին քարտուղար անուանեցաւ Համիտ Վէհպի պէյ, խմբագրապետ Թ-ՐԷԷ լրագրոյ։

Բարբերդի Բէպան Մատէն դաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Նէճիպ էֆէնտի, գայմագամ Դըզլի Քիլիսէի։

Նոյն նահանգին Դըզլի Քիլիսէ դաւառակին գայմագամ անուանեցաւ Սաատի էֆէնտի, գայմագամ Զմկածագի, և նմա յաջորդեց Սապրի էֆէնտի, գայմագամ Բէպան Մատէնի։

Զորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Ֆրանսացի արուեստագէտ Պ. Պ. Տըբոլէի և Բէլարի։

### Ի ԿԱՅՍ. ՊԱՇԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսն նախընթաց օր եւ երէկ կայս. պալատ երթալով, Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստացաւ եւ յետոյ իւր պաշտօնատեղին դարձաւ։

—Բարձր. Սպարապետը, Արտաքին, Դատական ու Կրթական գործոց Վսեմ. նախարարք եւ Քաղաքապետ Բրսման պէյ երէկ յաջորդաբար կայս. պալատ գնացին եւ Վեհ. Սուլթանի հրամաններն ստանալով, իրենց պաշտօնատեղիները դարձան։

### Ի Բ. ԴՈՒՌՆ

Վեհ. Սուլթանի սենեկապետներէն Արիֆի պէյ շաբաթի օրը Բ. Դուռը գընաց և Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ տեսակցելով, հաղորդեց Ն. Վեհափառութեան ինչ ինչ հրամանները։

—Նոյն օրը Դատական Վսեմ. նախարարն և քաղաքապետ Բրսման պէյ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

### ՀԱՅԿԵՐՈՑԹ Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Երէկ գիշեր կայս. պալատն մէջ չգեղ հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ անգլիական դեսպան Սըր Ռ. Հուդդի։ Սեղանին ներկայ գտնուեցան նաեւ Բարձր. Մեծ-Եպարքոսը, Արտաքին գործոց Վսեմ. նախարարն, ուրիշ մէկ քանի նախարարք և պալատական բարձրաստիճան պաշտօնատարք։ Նոյնպէս ներկայ էին անգլիական դեսպանատան առաջին թարգման Սրբ Ա. Սանտիսը եւ դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք։

Դեսպան Սըր Ռ. Հուդդ արժանացաւ Վեհ. Սուլթանի մասնաւոր մեծարանաց։ Թարգմանի պաշտօնը վարեց արարողապետ Միւնիր փաշա։ Հացկերոյթի պահուն կայս. պալատն նուագածուաց խումբը գեղեցիկ կտորներ նուագեց։

## ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Երուսաղեմայ նոր կառավարիչ Իպրահիմ փաշա, Նախորդ կառավարիչ Սուրիական Տրիպոլսոյ, հրաման ստացած է անմիջապէս իւր նոր պաշտօնատեղին՝ Երուսաղէմ ուղեւորիլ։

## ՑՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Երէկ Նախարարաց Խորհրդոյ ի նիստ գումարուած պահուն ժամ 10½ին Ցունաց Պատրիարքական փոխանորդն և Եէնիսիւնեա Տիմիթրաքի էֆէնտին Խորհուրդին հրաւիրուեցան և Պատրիարքարանի խնդրոց Նկատմամբ ինչ ինչ բացատրութիւններ առնուեցան անոնցմէ։

## Պ. ՔԱՌԻԼՈ

Սելանիկ-Միդրովիձայի երկաթուղւոյ գծին պատասխատու Պ. Ալֆրէտ Քառլա ստացած ըլլալով այդ մենաշնորհի վերաբերեալ բոլոր պաշտօնական թղթերը, այսօր Եւրոպա կ'ուղեւորի, ուր դրամատերաց խումբ մը պիտի կազմէ։

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Գեղարուեստից վարժարանի աշակերտաց կողմէ շինուած պատկերներն, արձաններն և այլ ձեռագործներն ի տես հասարակութեան դրուած ըլլալով, շաբաթ օրը կայս. թիկնապահ Ֆէրիդ Ահմէտ Ալի փաշայի նախագահութեամբ կազմեալ քննիչ ժողով մը իւրաքանչիւր ձեռագործն առանձինն քննելով վարձատրութիւնները որոշեց։

Աւասիկ այս տարուան մրցանակ ստացող հայ աշակերտաց անունները.

Ի-ԼԱՆԴՐԷ Բ-ՐԷ-ԲԷՅ Դ-ՈՒ.— Երուանդ էֆէնտի, երկրորդ կարգի առաջին մրցանակ։ Աղաթոն էֆէնտի, երկրորդ կարգի առաջին մրցանակ։ Նշան էֆէնտի և Ոսկան էֆէնտի, պատուոյ յիշատակութիւն։

Ի-ԼԱՆԴՐԷԼ ԿՈՒՆՏ Դ-ՐԷ.— Թովմաս էֆէնտի, առաջին կարգի առաջին մրցանակ։

Մ-ԽԻԹԱՐ ԷՖԷՆԴԻ ՆԻ-ՐԷՐԸ ԵՐԿՐՈՐԴ Դ-ՐԷ.— Մարտիրոս էֆէնտի, առաջին աստիճանի մրցանակ եւ Սարգիս էֆէնտի Ալազունեան, երկրորդ աստիճանի երկրորդ մրցանակ։

Մ-ԽԻԹԱՐ ԷՖԷՆԴԻ ՆԻ-ՐԷՐԸ ԿՈՒՆՏ Դ-ՐԷ.— Արամ էֆէնտի, երկրորդ աստիճանի մրցանակ։

Ն-Խ-ԶԻ-ԹԱՐ-ԳԱՆ Դ-ՐԷ.— Վրդանէս էֆէնտի, երկրորդ աստիճանի մրցանակ։

Ճ-ՐԱ-ԲԱ-ԴԵՐ ԵՐԿՐՈՐԴ Դ-ՐԷ.— Անտոն էֆէնտի և Արամ էֆէնտի առաջին աստիճանի մրցանակ։ Յակոբ էֆէնտի երկրորդ աստիճանի մրցանակ։

Ե-ՂԷ-ՐԴ Դ-ՐԷ.— Կարապետ էֆէնտի, առաջին աստիճանի մրցանակ եւ Արտաշէս էֆէնտի երկրորդ աստիճանի մրցանակ։

Ա-ՐՔԻ Դ-ՐԷ.— Յարութիւն էֆէնտի և Արամ էֆէնտի առաջին աստիճանի մրցանակ։ Յակոբ էֆէնտի և Աւետիս էֆէնտի երկրորդ աստիճանի մրցանակ։

## ԹՈՒՐՔԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԼՔ

Փարիզցի դրամատերաց խումբ մը կայս. կառավարութենէն մենաշնորհ պիտի ինդրէ պարսկական սահմանագլխոյն մօտ երկաթուղի մը շինելու համար։ Այս գիծ պիտի սկսի Մուսուլի Սիւլէյմանիյէ դաւառէն և պիտի երթայ մինչեւ Բէրպէրա, Պաղտատէն ու Սալահիյէէն անցնելով։

* *

Նախարարաց Խորհուրդն որոշած էր տալ Պ. Դոյթարի ինդրած մենաշնորհն Սամսունէն ի Սեբաստիա երկաթուղի մը շինելու համար։

Արդ, հարկ եղած կայս. Իրատէն ելած ըլլալով հաղորդուած է Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան։

Վեհ. Սուլթանը միանգամայն հրամայած է որ հարկ եղած պայմանագիրը կարճ միջոցի մը մէջ կնքուելով իրեն մատուցուի։

## ՄԱՐՄԱՑԻՆ ՍԱԿԱԳԻՆ

Պրուսելի մէջ ի մօտոյ համաժողով մը պիտի գումարի Քոնկոի համար պատրաստուելիք մաքսային սակագնոյն նկատմամբ։

Պելճիոյ կառավարութիւնը հրաւէր ուղղած է կայս. կառավարութեան որ ներկայացուցիչ մը պիտի ունենայ նոյն համաժողովին մէջ։ Արտաքին գործոց նախարարութիւնը նկատողութեան առած է այդ հրաւիրագիրն եւ պէտք եղածն ի գործ պիտի դնէ։

## ՄԱՎԶԻՐԵԱՆ ՀՐԱՑԱՆ

Շաբաթ փաշա, որ Օպէնտորֆ (Գերմանիա) կը գտնուի ի հաշիւ օսմ. կառավարութեան շինուած Մավզերեան նոր հրացաններն ստանալու համար, հրաման ստացեր է մայրաքաղաքս դալու։ Ըստ տեղեկութեանց Մէնիրէսի, Շաբաթի փաշա իւր հետ կը բերէ նոր տեսակ հրացանի նմոյշներ, որոց վրայ պիտի խորհրդակցի սպայակոյտի ժողովին։

## ՍԻՐԲԻՃԻ ՆՈՐ ԿԱՑԱՐԱՆԸ

Այսօր հանդիսաւորապէս տեղի կ'ունենայ Սիրքէճիի Նորակառոյց կայարանի բացումը, ճիշդ կէս օրին։ Հրաւիրեալք հին կայարանը պիտի հաւաքուին։

## ԴԱՏԱՍՏԱՆ

Մէ-ՐԷ-ՎԷՐ կ'իմանայ թէ Բալուցի Հիւսէյին պէյ, որ տեղւոյն Նախկին հարցաքննիչ դատաւոր Քէշիշեան Յովհաննէս էֆէնտիի սպանման պատճառաւ ամբաստանուած էր, Քարբերդի պատժական ատեանին առջեւ դատուելով անպարտ արձակուած է, որովհետեւ եղած ամբաստանութիւնք ապացուցուած չեն։ Հիւսէյին պէյի փոխանորդութիւնը վարած է փաստաբան Եազըճեան Յովհաննէս էֆէնտի։

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, չորեքշաբթի օրուան ժամ 10էն մինչեւ հետեւեալ օրուան 10 Հալէպի մէջ հնտախտի երկու մահեր պատահած են և Անտիոքի մէջ 27։ Հետեւեալ օրը Հալէպի մէջ՝ 2, ի Բիհանիյէի՝ երկու օրուան մէջ՝ 6 և չորեքշաբթի օրն Իտլիպի մէջ՝ 1։ Նոյն օրը Համսի մէջ՝ 38 և հինգշաբթի օրն այ 32։

Ուրբաթ օրուան ժամ 10էն մինչեւ հետեւեալ օրուան ժամ 10, Հալէպի մէջ հնտախտի երկու մահեր պատահած են. Անտիոքի մէջ՝ հոկտ. 17ին՝ 18 ու հոկտ. 18ին՝ 21, Այնթապի մէջ՝ 1 և ուրբաթ օրն Համսի մէջ՝ 39։

## ԹՐԱՄՎԷԻ Ի ՊԷՐՈՒԻԹ

Պէրուիթէն ի Դամասկոս շինուելիք թրամվէյի գծին մենաշնորհի վերաբերեալ գրութիւնք Պետական Խորհրդոյ յանձնուած են ի քննութիւն։ Պետական Խորհուրդը շաբաթ օրն իւր ներկայութեան կոչեց խնդրարկու Հասան էֆ. Պիհումն և անոր խնդրած մենաշնորհին նկատմամբ բացատրութիւններ պահանջեց։

## ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ռումանական դեսպան Պ. Միդիլինէօ շաբաթ օրը մայրաքաղաքս հասաւ։

—Կը հերքուի այն լուր, թէ հելլենական դեսպան Պ. Մաւրօկօրտաթօ հրաժարական տուած է Դրիքուրիսի նախարարութեան անկումէն անմիջապէս յետոյ։

—Գերմանական դեսպանն ու տիկինը Բատովիձ իրենց բնակութիւնը Թարապիոյ ամարանոցէն Այազ Փաշայի դեսպանատունը փոխադրեցին շաբաթ օրը։ Իտալական դեսպան և տիկին Պլան արդէն իսկ Այազ Փաշայի դեսպանատունը փոխադրած են իրենց բնակութիւնը։

—Սպանիական դեսպանատան նորընտիր առաջին քարտուղար Պ. տը Լապառա և նորընտիր հիւպատոս Պ. Մօսքի յառաջիկայ շաբթու մայրաքաղաքս կը հասնին։

—Իտալական դեսպանատան թարգմաններէն Պ. Բոտէսթա Պրուսա ուղեւորեցաւ։

## ՀԱՐՍԱՆԻՔ ՇԷՐԻՖ ՊԷՅԻ

Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշայի որդւոյն կայս. Թիկնապահ Շէրիֆ պէյի հարսանեաց օրը, ուրբաթ, Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ կայս. կանոնցին Խազինէտար Ուսթան Վսեմ. Սայիտ փաշայի ապարանքը գնաց ի Նշան Թաշ, ուր տեղի ունեցաւ հարսանիքը։ Խազինէտար Ուսթան Շէրիֆ պէյի յանձնեց Վեհ. Սուլթանի կողմէ շնորհեալ ականակուռ տուփ մը, նոյնպէս հարսին յանձնեց առաջին կարգի Շէֆգաթ պատուանշան։ Խազինէտար Ուսթան, ըստ սովորութեան դրամներ բաշխելէ յետոյ ճաշի հրաւիրուեցաւ։ Սեղանին սպասաւորեցին Վսեմ. Սայիտ փաշայի կիներ ու նոր հարսը։

Վսեմ. Սայիտ փաշա յետոյ կայս. պալատ գնաց եւ Վեհ. Սուլթանին կողմէ եղած այս մեծարանաց համար երախտագիտութիւն ու շնորհակալութիւն մատոյց։

Կայս. հրամանաւ՝ Ն. Վսեմութիւն նախընթաց գիշեր կայս. պալատ գնաց եւ հոն ճաշելէ յետոյ Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ։

## ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՄԻՋՈՑՆԵՐ

Զրհանկիր զօրաց հրամանատար Զէչչենի փաշայի կողմէ հրդեհի դէմ ձեռք առնուելիք նոր միջոցներու մասին տրուած ծրագրոյն վրայ հետեւեալ տեղեկութիւնք առնուած են։

Զէչչենի փաշա առաջարկած է որ հրդեհներն անմիջապէս իմաց արուելու համար իւրաքանչիւր պահականոցի և ջրհանկիր զօրաց կեդրոններու միջեւ հեռագրական թելեր հաստատուին, ջրհանկիր զօրաց թիւն աւելցնայ և հրդեհներն իմաց տալու համար նոր միջոցներու դիմուին. գաւառաց մէջ ևս ջրհանկիր զօրաց վաշտերը կանոնաւորելու համար կ. Պոլսէն ապայներ ղրկուին։

Այն գինուորական յանձնաժողովն որ երկու տարիէ հետէ զբաղած էր Թուրքիոյ Եւրոպական նահանգաց յատակագիծերն հանելու, իւր աշխատութիւններն աւարտած ըլլալով, ի մօտոյ մայրաքաղաքս պիտի դառնայ։

—Օսմ. կայս. Պանքայի Պրուսայի ճիւղին տնօրէն Պ. Քրօզիէ, նախորդ տնօրէն Փիլիպէի ճիւղին, իւր ընտանիքը փոխադրելու համար վերջերս Փիլիպէ գացած պահուն Ֆէրտինանտ իշխանին կողմէ հեռագրաւ Սոֆիա հրաւիրուեր է, ուր Ն. Բարձրութիւն Ս. Ալէքսանդր պատուանշանի սպայութեան աստիճանը նուիրեր է նմա։

—Ընկերակցեալ Էրէ-ՊՐ-ԼԻ զոհերուն ընտանեաց ի Նպաստ կատարուած հանգանակութեան գումարը հասած է 305,713 ղրուշի։

—Տանկն երեւան ելած է ի Սէլանիկ և բաւական մարդիկ վարակուած են։ Այդ հիւանդութիւն Քարբերդի մէջ եւս երեւան ելած է։

—Շերքէթի 2 թիւ չոգենաւ երէկ առաւօտեան մշուշի պահուն Պէպէքի առջեւ խրեցաւ, սակայն քիչ յետոյ կարելի եղաւ ազատել։

—Տոքթոր Մ. Մինասեան Պրուսայէն մայրաքաղաքս դարձաւ։

—Սադ-ՀԷ հերքելով Մէնդէս-ի այն լուրը թէ Թէնպէքիի մաքսախոյսութիւնը շատացած է և մաքսատանց տոմարներու մէջ Թէնպէքիի ներածում նշանակուած չկայ, կ'ըսէ թէ ըստ առաջնոյն սովորական քանակութեամբ Թէմպէքի բերուած և մաքսաւորքն առնուած է։

—Հաստատուած ըլլալով որ Արեւելեան Ռումէլիէն բերուած ոչխարները ծաղկի հիւանդութենէ վարակուած են, անասնաբուժեր ղրկուած են ի Ճիսրը Մուսթաֆա փաշա հարկ եղած միջոցները ձեռք առնելու համար։

—Երէկ Մէսարբուրնուի ծովեզերքէն մարդու դիակ մը գտնուեցաւ։ Այս մարդ նաւային սպայ մըն էր։ Գրպանէն գտնուած է չորս հարիւր ղրուշ, ժամացոյց մը և կնիք մը որուն վրայ «ՃԷմալ» անունը փորագրուած է։

—Էյուպցի Հիսայէթ էֆէնտի անուն երիտասարդ մը նախընթաց օր անձնասպան եղաւ ինքզինքը ջրհեղձի մը մէջ նետելով եւ երէկ անշունչ դիակը հանուեցաւ։

—Քաղաքապետութիւնը նկատելով որ այս միջոցիս մայրաքաղաքիս փուռերու մէջ պատրաստուած պակաս կշռոյ հացերու թիւն աւելցած է, հրահանգ ուղղած է թաղապետական շրջանակաց, որպէսզի այդ մասին մեծ ուշադրութիւն ընեն։

—Վեհ. Սուլթանը Մէկիւռտի օրը մկիթ գնացած պահուն գինուորաց շարքին մէջ 7-8 տարեկան տղայ մը նշմարեց որ գինուորական հագուստ կը կրէր և բարեւի կեցած էր. Ն. Վեհափառութիւն այդ տղան քովը բերել տուաւ և ինչ ինչ հարցումներ ընելով գոհ մնաց տղուն կողմէ տրուած մտացի պատասխաններէն։ Վեհ. Սուլթանն հրամայեց որ այդ տղան, որ հազարապետի մը տղան էր, գինուոր գրուի և կայսերազուն իշխանաց տրամադրութեան ներքեւ դրուելով դաստիարակուի։

## ԳՐԻԳՈՐ ԱՃԷՄԵԱՆ

### ՓԱՍՏԱԲԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ հաստատուած է ի Դալաթիա մեծ Խայիլ փաշա խան թիւ 14 հանգուցեալ փաստաբան Նշան էֆ. Պ. Պոյաճեանի գրասենեակն։ Կ'ստանձնէ ամէն տեսակ դատերու փոխանորդութիւն և կը խմբագրէ դատական և առեւտրական գործոց վերաբերեալ գրութիւնք։

* *

Հանգուցեալ փաստաբան Նշան էֆ. Պ. Պոյաճեանի ժառանգորդք պատիւ ունին զեկուցանել հանգուցելոյն պատուարժան յաճախորդաց, թէ նորա գրասենեակին գործերն յանձնուած են առ Գրիգոր էֆ. Աճէմեան, ձեռնհաս և պարկեշտ փաստաբանն, որ ստանձնած է շարունակել անոնց հոգատարութիւնն ի գոհացումն յանձնարարողաց։

## ԱԶԳ

Յամանթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ գրքաց սեպհականեալ վաղքիներէն հետեւեալները մատնիչ եղած ըլլալուն բան օրինի ամուրի հանուած են. ծախու առնելու փափաքողք առաւօտեանը ժամը 3ին Յամանթիոյ ի Նուենան վարժարան ընկերութեանս սենեակը բարեհաճին դիմել։

Ա. Թոփքապան Պապազիտ Ագա փողոց թիւ 5 մէկ փայտաշէն ամբողջ տուն մը, և Ներքնէ եղող թիւ 7 մէկ գինետան ամբողջ միւլքը կը վաճառուի։

Բ. Յամանթիոյ ՍԷԲԻ Զէլէպի փողոց սակրլի միւնեթիկ խաչատուր աղայի կին տիկին Պաբրուքուհիի մէկ քարուկիր տունն, իւր մահուանէ յետոյ երեք զաւակացը ժառանգ մնալով, որոց մին անգաւակ մնած ըլլալուն առթիւ յիշեալ տան երեք բաժնին մէկ բաժինը կը վաճառուի։

Ցիշեալ վաճառմունք թուականէս վաթսուն և մէկ օր միջոցի մէջ պիտի լրանան։ 3—15

18 հոկտ. 90. 186

## ՄՈՒԽԱՊԷՐԱԹ ՎԷ ԸՍԹԸԼԱՀԱԹ ԹԻԽՃԱՐԻՑԷ

Correspondance & Terminologie commerciales

